



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 օգոստոսի 2018 թվական N 73-Ա

«ԻԶԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Կ.Նազարյանի 27.08.2018 թվականի թիվ 27/69430/-18 զեկուցագիրը, «Իջևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռուզաննա Գրիգորյանի բացատրագիրը՝

կարգադրում եմ.

1.Աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու համար «Իջևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռուզաննա Գրիգորյանի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժը :

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

8/27/2018

X 


27 օգոստոսի 2018թ.
ք. Իջևան